նէն ապրեցուսջիք, զի կալեալս կապեալս տարցուք յԱղուանս[1] ի գործ կաւագործութեան գաղատոս որմաշէնս պիտոյից մերոց քաղաքաց, ապարանից եւ այլոց պիտոյից: *13* Այլ իբրեւ եկին հասին մերձեցան ի միմեանս գունդքն երկոքեան Յունացն եւ Պարսիցն, եւ հանդերձեալք խառնել ընդ միմեանս, ինքնին թագաւորն Հայոց Պապ վառեցաւ կազմեցաւ պատրաստեցաւ, եւ կամեցաւ ի ճակատ ելանել: *14* Ապա չառնոյր զայն նմա յանձն Տերէնտն զաւրավարն Յունաց, թէ ի ճակատ մտցէ[2]. այլ ասէ. Թագաւորն Յունաց զմեզ վասն քո յղեաց, եթէ երթայք զնա պահեցէք. արդ իցէ՝ թէ քեզ դէպ ինչ տայցէ, մեք զմեր թագաւորն որո՞վ երեսաւք տեսանեմք, կամ զի՞նչ տայցեմք նմա պատասխանի. եթէ իցէ՝ եւ մեք աստի առանց քո ապրեսցուք եւ առ մեր թագաւորն հասանեմք, եւ լինիցիմք այնուհետեւ գլխապարտք առաջի մերոյ թագաւորին: *15* Այլ արա դու, արքայ, զոր մեք ասեմք քեզ, ա՛ռ դու զեպիսկոպոսապետդ Հայոց զՆերսէս, եւ ել նիստ ի վերայ Նպատ լերինն յամուր եւ յանկասկած տեղւոջ, եւ սուրբ արքեպիսկոպոսապետն Ներսէս արասցէ աղաւթս եւ խնդրեսցէ ի Տեառնէ, զի Տէր տացէ մեզ զյաղթութիւն: *16* Եւ ի բարձուէն նայեսցիս, եւ տեսջիր զջան վաստակոց պատերազմին մերոյ զքաջութիւն եւ զվատութիւն, զոր առաջի քո գործեսցեն:

17 Ապա թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այսոցիկ. առ ընդ իւր զմեծ քահանայապետն Ներսէս, եւ ելանէր նստէր ի վերայ նպատական լերինն. եւ ամենայն զաւրքն Յունաց եւ Հայոց իջանէին ի տեղի պատերազմին: *18* Ապա եկն եւ զաւրավարն սպարապետն Հայոց Մուշեղ, եւ եբեր զնշանսն իւր եւ զզէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն, զի աւրհնեսցէ զնա, եւ իջցէ ի պատերազմ: *19* Եւ ի ժամանակին յայնմիկ յիշեաց թագաւորն Պապ զհին զրոյցսն, եւ ասէ. Յիշեցի ես զայն, զի բարեկամ է Մուշեղն թագաւորին Պարսից Շապհոյ: *20* Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ արձակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարաւք եւ վաշտկանաւքն. եւ լուեալ եւս է իմ թէ՝ ի Պարսիկս խաւսի. արդ մի՛ մտցէ դա ի ճակատ:

21 Ապա զաւրավարն Հայոց Մուշեղ բարեխաւս առնէր առ թագաւորն Պապ զմեծ քահանայապետն Ներսէս: *22* Իսկ թագաւորն Պապ ասէ ցեպիսկոպոսապետն Ներսէս, թէ մի՛ լինիր դու բարեխաւս. զի իբրեւ իջանէ, ի զաւրսն Պարսից անկանի: *23* Իսկ նա եւս քան զեւս յաճախէր մատուցանել զբարեխաւսութիւնն: *24* Իսկ թագաւորն, քանզի բանիւ ինչ ոչ անցանէր զնորա ի ժամանակին յայնմիկ, ասէ ցՆերսէս. Կամք քո կատարեսցին: *25* Բայց նախ երդումն տուր յաջ քո, զի մեզ մի՛ ստեսցէ, եւ ապա արձակեսջիր ի պատերազմ: *26* Ապա կոչեն զՄուշեղ զառաջեաւ արքային, եւ եկն եպագ երկիր

1 *Յօրինակի միում՝* յԱղուանս: *Այլք՝* յաղթանս

2 *Օրինակ մի յաւելու՝* արքայն Պապ